

ՄՈՒՀԱՄՍԱԴ ՄԱՐԳԱՐԵԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԵՎԱՆ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԵՎ ՈՉ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ՏՐԿԱԾ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ

Իսլամի տարածումն Արաբական թերակղզում սկսվեց 7-րդ դարում, երբ Մուհամմադը հանդես եկավ իր նոր կրոնի գաղափարախոսությամբ: Մեքքայի վերնախավի հետ կրոնական հողի վրա ունեցած իր տարաձայնությունների պատճառով Մուհամմադն իր կողմնակիցների (մուհաջիբի) հետ հեռացավ Յասրիբ (Մադինա) քաղաքը: Այստեղ կար հրեական մեծ համայնք, նրանց հետ բնակվում էին հեթանոսներ ու քրիստոնյաներ: Յասրիբի բնակիչները ոչ միայն ընդունեցին Մուհամմադի ուսմունքը, այլև վստահեցին նրան իրենց քաղաքի ղեկավարությունը: Պահպանվել է Մադինայի համայնքի առաջին կանոնադրությունը, որը կազմել էր Մուհամմադը, մոտավորապես 622-623 թվականներին: Այն եվրոպական հետազոտողների կողմից անվանվել է «Մադինայի սահմանադրություն»¹³⁰:

Մուհամմադը կանոնադրության ստեղծման ժամանակաշրջանում արաբներին ու հրեաներին համարում էր մեկ միասնական համայնք (ումմա), քանի որ համոզված էր, որ ինքը քարոզում է այն ուսմունքը, որ ժամանակին քարոզել են Մովսեսը և Աբրահամը¹³¹: Այս համաձայնագիրը կնքվել է Մուհամմադի և Մադինայի բնակչության միջև՝ նախադրյալներ ստեղծելով նոր ձևավորվող մուսուլմանական հասարակության համար: Համաձայնագրի ամբողջական տեքստը մեզ է հասել Իբն Հիշամի (մահ. 834թ.) միջոցով և զետեղված է «Ալ-Սիրա Ալ-Նաբավիյա» («Մարգարեի կյանք») գրքում¹³²: Այն վերաբերում է Մադինա քաղաքի արաբական ցեղերին առ այն, որ նրանք գտնվում են Ալլահի ու նրա մարգարեի հովանավորության ու պաշտպանության ներքո և համարվում են մեկ միասնական մուսուլմանական համայնք և թվարկվում են այդ արաբական ցեղերի անունները: Այս համաձայնագրում հիշատակվում են նաև հրեական ցեղերի անունները, որոնք ևս գտնվում էին Ալլահի ու նրա մարգարեի հովանավորության ներքո, նրանք պետք է բարյացակամ լինեն միմյանց ու մուսուլմանների նկատմամբ, օգնեն վերջիններիս պատերազմի ծախսերը հոգալու համար: Նշվում է, որ նրանք հավատացյալների հետ կազմում են մեկ համայնք, սակայն հրեաները ունեն իրենց կրոնը, մուսուլմաններն՝ իրենցը: Այս փաստաթուղթը վկայում է Մուհամմադի՝ հրեաների նկատմամբ ունեցած բարյացակամ վերաբերմունքի մասին: Այս շրջանում Մուհամմադն առաջին պլան մղեց Աբրահամին՝ կարծելով, որ հրեաներն ու քրիստոնյաները, ովքեր նրան համարում են իրենց կրոնների նախահայրը, պետք է ընդունեն նաև իր՝ Մուհամմադի կրոնը, քանի որ ինքն էլ է քարոզում նույն Աբրահամի հավատքը և ոչ ավելին: «Հրեաներն ու քրիստոնյաները ասում են՝ ընդունեցե՛ք մեր հավատքը, եթե ցանկանում եք փրկվել: Պատասխանի՛ր նրանց՝ մենք հետևում ենք Աբրահամի հավատքին, որը հրաժարվել էր կուռքերին շողոքորթելուց, հավատում ենք Մովսեսին, Իսմայելին, Իսահակին»¹³³:

Երբ Մուհամմադին հաջողվեց ամրապնդել իր հոգևոր և աշխարհիկ իշխանությունը Մադինայում, նա ակտիվացրեց իսլամի քարոզը՝ ձգտելով հավատափոխ

¹³⁰ Montgomery W., Islamic-political Thought, the Basic Concept, Edinburgh university press, 1987.

¹³¹ Al-Bacara 135, p. 21, Qoran, Damascus, 1989.

¹³² Das Leben Muhammed's nach Muhammad Ibn Ishak, bearbeitet von Abd al-Malik Ibn Hisam, I, Leiden, 1858, p. 341-344, տեքստի հայերեն թարգմանությունը տե՛ս Քոչարյան Հ., Մեդինայի համաձայնագիրը, Բանբեր, Երևանի համալսարանի, Հասարակական գիտություններ (առանձնատիպ) 1 (115), Երևան, 2005:

¹³³ Al-bacara 134, 135, p. 20-21, Qoran

անել իր ամենահամառ հակառակորդներին՝ հրեաներին¹³⁴: Մուհամմադը կոչ արեց բանու կայնուկա հրեական ցեղին իսլամ ընդունել՝ սպառնալով, որ հակառակ դեպքում Ալլահը կպատժի նրանց: Մուհամմադին հաջողվեց հրեական ցեղերին վտարել քաղաքից: Այնուհետև նա որոշեց իր ազդեցությունը տարածել Սիրիայում: Սակայն այս ճանապարհին կար մի լուրջ խոչընդոտ՝ Խայբար օազիսը, որը, հիմնականում, բնակեցված էր հրեաներով: Խայբարի նվաճումից հետո նա իրեն ենթարկեց հարևան Ֆադակը¹³⁵: Խայբարի հրեաների հետ Մուհամմադը կնքեց հաշտության պայմանագիր՝ տրված «Մովսեսի օգնական և եղբայր, մարգարենների ճիշտ վկայություն Մուհամմադից շին Կտակարանի հետևորդների խմբին»¹³⁶: Նա Խայբարը բաժանեց 36 մասի՝ հողատարածքներ հատկացնելով իր զինակիցներին: Այնուհետև Մուհամմադը շարժվեց դեպի Վադի ալկուրա, որի բնակիչները չորսօրյա պաշարումից հետո համաձայնեցին ճանաչել մարգարեի իշխանությունը՝ նրան տալով իրենց բերքի որոշ մասը¹³⁷: Այդ մասին լսելով՝ Թայմայի բնակիչները ևս համաձայնեցին հարկ վճարել¹³⁸: Մարգարեն համաձայնագիր կնքեց Թայմայի շրջանի բանի ադիյա ցեղի հետ, որը պետք է գլխահարկ վճարեր՝ իսլամի հովանավորության տակ գտնվելու պայմանով¹³⁹:

Ամրանալով Արաբական թերակղզում և իր իշխանությանը ենթարկելով նրա որոշակի մասը՝ Մուհամմադը, ակնհայտորեն, պիտի կանգնեց հարևան քրիստոնյա իշխանապետությունների (Ղասսան և Լահիմ տոհմերի գլխավորությամբ) և Բյուզանդիայի հետ արտաքին դիվանագիտական հարաբերություններ հաստատելու անհրաժեշտության առաջ: Մուհամմադի բոլոր կենսագիրները վկայում են, որ Հուդայբայի հաշտությունից անմիջապես հետո VI դարի վերջին կամ VII դարի սկզբին Մուհամմադը իսլամադավան դառնալու կոչով ուղերձներ է հղել Բյուզանդիայի կայսր Հերակլոսին, Պարսկաստանի թագավոր Խոսրով II-ին, Եգիպտոսի կառավարիչ ալ-Մուկաուկիսին, Եթովպիայի (Հաբեշտան) իշխանին՝ նեգուսին, դասսանյան իշխանին, Օմանի, Եմենի թագավորներին, Բահրեյնի, Յամամայի կառավարիչներին¹⁴⁰:

Եթովպիայի իշխանի՝ նեգուսի մոտ Մուհամմադը ուղարկեց Ամրու իբն Ամիյա Ալ-Դամիրիին, չնայած որ ուղերձի տեքստում նշվում է իր հորեղբորորդի Ջա'աֆարի անունը. «Ուղարկում եմ քեզ մոտ իմ հորեղբորորդի Ջա'աֆարին և նրա հետ մուսուլմաններից մեկին»¹⁴¹:

Այստեղ առկա է ժամանակագրական առումով մի անճշտություն. այդ շրջանում Ջա'աֆարը չէր կարող ուղարկված լինել Մուհամմադի կողմից նեգուսի մոտ, քանի որ նա արդեն այդ ժամանակ գտնվում էր Եթովպիայում¹⁴²: Նեգուսին ուղղված իր ուղերձում Մուհամմադը փառաբանում է Ալլահին, որը միակն է, վկայում է, որ Հիսուսը Մարիամի

¹³⁴ Большаков О., История халифата, т. 1, Москва, 1989, с. 107-108, Flugel G., Geschichte der Araber for den Sturz des Chalifates von Bagdad, b.I, Leiden 1867, p. 80.

¹³⁵ Al-Balazuri, Kitab al-futuhi al-buldan, Beirut, 1958, p. 38-39.

¹³⁶ Ibid, p.38, Վալ.15- Nameha wa pimanhayе siyasi, hadrate Muhammad, Tehran 1999, p. 138

¹³⁷ Al-Balazuri, Kitab al-futuhi al-buldan, p. 43-45, Ibn al-Athir Al-Kamil fi al-Tarikh, b. II, Kahira, 1987, p. 152.

¹³⁸ Aby-Ja'afar ibn Jarir Al-Tabari, Tarikh al-risul wa al-muluk. b. III, Kahira, 1961, p. 1585/1, Վալ. 19, Nameha wa pimanhayе siyasi, p. 144

¹³⁹ Ibid.

¹⁴⁰ Das Leben Muhammed's nach Muhammad Ibn Ishak, II, p. 972 Al Mas'udi Kitab al-tanbih wa al-ashraf, Leiden, 1988, p. 260-261.

¹⁴¹ Վալ. 21, 26,35 – Nameha wa pimanhayе siyasi, p. 148, 155, 189.

¹⁴² Abd al-Kader, Islam, zuhuruhi wa intisharuhu, Kahira, 1945, p. 204, Aby Ja'afar ibn Jarir Al-Tabari. Tarikh al-rusul wa al-muluk, b. II, p. 1569/1.

որդին է, Աստծո շունչը: Նա կոչ է անում նեգուսին և նրա գործին դառնալ դեպի Ալլահը, հնազանդվել նրան և թողնել մեծամտությունը¹⁴³:

VIII դարի մուսուլմանական պատմագրության հայտնի ներկայացուցիչներից մեկը՝ Մուհամմադ իբն Իսհակ իբն Յասարան (մահ. 768 թ.) իր արշավանքների գրքում (ալ մադազի) շարադրում է Մուհամմադի կողմից նեգուսին ուղղված ուղերձի տեքստը, որը հիմնականում համընկնում է վերոհիշյալ ուղերձի բովանդակության հետ, սակայն այստեղ չի նշվում Ջա'աֆարի անունը¹⁴⁴ :

10-րդ դարի մուսուլմանական պատմագրության հայտնի մատենագիր Ալ-Թաբարին, հենվելով Իբն Իսհակի կողմից հիշատակած այս տեղեկությունների վրա, բերում է Մուհամմադ մարգարեին ուղղված նեգուսի պատասխանը: Նեգուսը երախտագիտություն է հայտնում Աստծուն, որը միակն է, համաձայնվում է մարգարեի՝ Հիսուսի մասին հայտնած մտքերի հետ՝ հաստատելով, որ Մուհամմադը Աստծո իսկական առաքյալն է: Նա գրում է, որ ինքը օգնության ձեռք է մեկնել Մուհամմադի հորեղբորորդուն և նրա ընկերներին¹⁴⁵:

Արաբ մի շարք պատմաբաններ տարակարծություններ ունեն նեգուսի կողմից իսլամ ընդունելու վերաբերյալ, քանի որ վերջինս մարգարեի ուղերձին պատասխանել է դրական ձևով, որն, ըստ նրանց, կասկած չի թողնում նեգուսի կողմից իսլամի կրոնն ընդունելու վերաբերյալ, չնայած որ այդ մասին չկան համոզիչ փաստարկներ, և որ իսլամը Եթովպիա է մտել միայն ավելի ուշ շրջանում¹⁴⁶: Կարծում ենք, որ արաբ պատմաբանների տարակարծությունները այս հարցի վերաբերյալ չափազանցված են, և որ իսլամն ավելի ուշ է որպես կրոն մուսոք գործել Եթովպիա:

Մուհամմադը Բյուզանդիայի կայսր Հերակլոսի մոտ ուղարկեց Դահիյա իբն Խալիֆա Ալ-Հազրաջիին և նրա հետ մի ուղերձ, որով կոչ էր անում կայսերը՝ դառնալ իսլամադավան, որպեսզի փրկություն գտնի այդ դեպքում Ալլահը նրան կհատուցի կրկնակի պարգևներով, իսկ եթե չընդունի այն, ապա «կշրջվի թիկունքով» և նրա վրա կլինի «իր երկրի մարդկանց հանցանքը»¹⁴⁷: Նա վկայում է, որ ինքը ևս քրիստոնյաների նման երկրպագում է միակ Աստծուն, որին հավասարը չկա և չի ընդունում այլ աստվածներ:

VIII-IX դարերի արաբ պատմագիր Աբու Ուբայդան իր աշխատության մեջ բերում է այս ուղերձի իր տարբերակը, որտեղ նշվում է, որ հռոմեացիներն ու կայսրը կունենան այն իրավունքներն ու պարտականությունները, ինչ ունեն մուսուլմանները, եթե ընդունեն իսլամը: Ուղերձում Դուրանից բերվում է հետևյալ հատվածը. «Կովեցեք Գրքի մարդկանցից նրանց դեմ, ովքեր չեն հավատում Ալլահին և վերջին օրվան, քանի դեռ նրանք չվճարեն իրենց ձեռքով գլխահարկը, ստորացված լինելով»¹⁴⁸: Եթե կայսրը չընդունի այս պայմանները, ապա պարտավորվում է գլխահարկ վճարել: IX դարի արաբ պատմագիր Յա'ակուբին (մահ. 897թ.) իր պատմության մեջ բերում է Բյուզանդիայի կայսր Հերակլոսի՝ Մուհամմադին ուղղված պատասխանի տեքստը¹⁴⁹:

Մուհամմադը այստեղ անվանվում է Ահմադ: Կայսրը հավատում է, որ Հիսուսը ավետել է Մուհամմադի գալուստը, որ անգամ իրենք գտել են Հնգամատյանում նրա

¹⁴³ Վալ. 21- Nameha wa pimanhayе siyasi, p. 145-147.

¹⁴⁴ Gyllaume A., The life of Mohammad. translation of Ibn Ishaks "Sirat rasul Allah", Leiden, 1955, p. 112.

¹⁴⁵ Aby Ja'afar ibn Jarir Al-Tabari, Tarikh al-rusul wa al-muluk, b. II, p. 1569-1570

¹⁴⁶ Abd al-Kader, Islam, Zuhuruhi wa intisharuhu, p. 204.

¹⁴⁷ Վալ. 21- Nameha wa pimanhayе siyasi, p. 154-155, Das Leben Muhammed's nach Muhammed Ibn Ishak, II, p. 971.

¹⁴⁸ Kitab al-amwal liimami al-azim Abu Ubayd, Kahira, 1968, p. 628, f³i. 28, Nameha wa pimanhayе siyasi, p. 158.

¹⁴⁹ Վալ. 27 Nameha wa pimanhayе siyasi, p. 157.

անունը: Կայսրը հավաստում է, որ ինքը հրամայել է հռոմեացիներին ընդունել իսլամ, սակայն նրանք չեն կատարել այդ հրամանը: Կայսրը անգամ ցանկություն է հայտնում գալ մարգարեի մոտ և լվանալ վերջինիս ոտքերը¹⁵⁰:

Ըստ հիջրայի I դարի հայտնի իրավագետ Ահմադ իբն Հանբալիի և Աբու Ուբայդայի հաղորդած տեղեկությունների, որոնց համար աղբյուր է հանդիսացել Սա'իդ իբն Աբու Ռաշիդին, մարգարեի մոտ է եկել կայսեր պատգամաբեր Ալ-Թանուխին: Մուհամմադը իսլամ ընդունելու ուղերձ է հղել կայսերը՝ նրա մոտ ուղարկելով Դիհյա Քալբիին: Կայսրը, կանչելով իր մոտ հռոմեացի վանականներին և հոգևորականներին, ներկայացրել է նրանց Մուհամմադի առաջարկը՝ կա՛մ իսլամ ընդունել, կա՛մ գլխահարկ վճարել: Ըստ Աբու Ուբայդայի՝ Հերակլոս կայսրը, թողնելով քրիստոնեությունը, ընդունել է իսլամ¹⁵¹: Ընդ որում, այս մասին հիշատակում է նաև Ալ-Թաբարին և արաբ մյուս պատմագիրները՝ նշելով, որ կայսրը մեծ համակրանք է ունեցել Մուհամմադի և նրա կրոնի նկատմամբ¹⁵²: Ակնհայտ է, որ այս տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը:

Մուհամմադը իսլամ ընդունելու ուղերձ է հղել նաև Ալեքսանդրիայի կառավարիչ Մուկատուկիսին, իր պատգամաբեր՝ Հատիբ իբն Աբի Բալթա'ա Լախմիի հետ:¹⁵³ Ուղերձում Մուհամմադը Մուկատուկիսին կոչ է անում ընդունել իսլամ, ինչը փրկության միակ պայմանն էր՝ հավաստելով, որ իրենք ևս քրիստոնյաների նման հավատում են Միակ Աստծուն, որը չունի ընկերներ: Այս ուղերձն իր բովանդակությամբ հիմնականում համընկնում է Մուհամմադի կողմից նեգուսին և Բյուզանդիայի կայսերն հղված ուղերձների հետ: Մուկատուկիսը, պատասխանելով նրա ուղերձին, իր նամակում գրում է, որ ինքը գիտի, որ Շամի երկրից մարգարե պիտի հայտնվի¹⁵⁴: Ի նշան բարեկամության, նա մարգարեին է ուղարկում հագուստներ և երկու աղախին: Այս մասին հիշատակում են Իբն Սա'ադը, Աբու Ուբայդան, Իբն Ջաուզին և այլ պատմագիրներ¹⁵⁵: VIII-IX դարերի մուսուլման պատմագիր Օմար Ալ-Ուակիդիի (747-823 թթ.) պատմության մեջ ևս բերվում է Մուհամմադի կողմից Մուկատուկիսին հղված ուղերձի տեքստը, որը հիմնականում իր բովանդակությամբ համընկնում է վերոհիշյալ ուղերձի բովանդակության հետ, սակայն Մուկատուկիսի կողմից մարգարեի ուղերձին գրված պատասխանի մեջ բացակայում են Մուհամմադի համար հագուստներ և աղախին ուղարկելու մասին հիշատակությունները¹⁵⁶:

Մուհամմադն իսլամ ընդունելու ուղերձ է հղել նաև Պարսկաստանի Խոսրով Փարվեզ թագավորին իր դեսպանորդ Աբդուլլա իբն Ռուզաֆա Ալ-Սահմիի հետ¹⁵⁷: Իր ուղերձում նա կոչ է անում հնազանդվել Ալլահին, որը միակն է, և ընդունել իրեն որպես Ալլահի մարգարեի: Նա նախազգուշացնում է, որ եթե թագավորը չընդունի իսլամը և մերժի այն, ապա «իր վրա կլինի իր ժողովրդի հանցանքը»¹⁵⁸: Այս մասին հիշատակում են

¹⁵⁰ Վավ. 27, 28 Nameha wa pimanhayе siyasi, p. 157-158.

¹⁵¹ Նույն տեղում, p. 159.

¹⁵² Abd al-Kader, Islam, zuhuruhu wa intisharuhu, p. 201-202, Aby Ja'afar ibn Jarir Al-Tabari. Tarikh al-rusul wa al-muluk, II, p. 1568/1.

¹⁵³ Ibn al-Athir, Al-Kamil fi al-Tarikh, II, p. 143, 3⁹¹. 50,51 Nameha wa pimanhayе siyasi, p. 184-185.

¹⁵⁴ Նույն տեղում, էջ 186:

¹⁵⁵ Ibn Saad Biographien Muhammed, seiner Gefahrten und den spateren Trager des Islams, Hnsg. von E. Sachau, b. I 1905-1921, p.16, Kitab al-amwal li Aby Ubayd, p. 632.

¹⁵⁶ Վավ. 51 Nameha wa pimanhayе siyasi, p. 176, Այս տեքստի օրինակները դիտարկվել են նաև Ա. Կոլեսնիկովի կողմից – Колесников А., Две редакции письма Мухаммада сасанидскому шаху Хосрову II Парвизу – П.С., вып. 17 (80), 1986, с. 74-83

¹⁵⁷ Ibn al-Athir. Al-Kamil fi al-tarikh, II. p. 144

¹⁵⁸ Նույն տեղում, էջ 144:

Յակուբին, Իբն Սա'ադը, Աբու 'Ուբայդան և այլ պատմագիրներ¹⁵⁹: Յակուբիի պատմության մեջ առկա է Խոսրով Փարվեզի՝ Մուհամմադին հղած պատասխան գրության տեքստը: Հիշատակվում է, որ Խոսրովը իր պատասխան նամակի հետ նրան է ուղարկել մուշկ և երկշերտ մետաքսի կտոր: Մուհամմադը, ըստ պատմագրի, չի կարդացել այս նամակը: Յակուբին նշում է, որ ուրիշները պատմում են, որ երբ Մուհամմադի ուղերձը հասավ Խոսրովին, վերջինս այն պատռեց: Այդ ժամանակ Մուհամմադն ասաց, որ Ալլահն էլ նրա թագավորությունը մաս-մաս կանի: Ժամանակակից արաբ պատմաբանները հաստատում են վերոհիշյալ դեպքի և ուղերձի տեքստի արժանահավատությունը՝ մատնանշելով այդ ուղերձի բնագրի գոյության փաստը, որը գրվել է կաշվի վրա և իր վրա կրում է Խոսրով Փարվեզ թագավորի կողմից պատրվածքի հետքերը¹⁶⁰: Ընդ որում, գոյություն ունեն նաև տարբեր ժամանակներում հայտնաբերված և տպագրված գրությունների տեքստեր՝ գրված կաշվի վրա և ուղղված Հերակլես կայսերը, Ալեքսանդրիայի կառավարչին, Եթովպիայի նեգուսին, Բահրեյնի կառավարչին, այդ գրությունների շուրջ ավելի քան մեկ հարյուրամյակ ընթացում են վիճաբանություններ¹⁶¹:

Մինչև հիմա բացակայում են այդ գրությունների նյութի ուսումնասիրությունները ֆիզիկական մեթոդներով, բացի այն փաստից, որ Բրիտանական թանգարանի փորձագետները, ուսումնասիրելով նեգուսին ուղղված ուղերձի տեքստը, կասկած են հայտնել նրա վաղեմության վերաբերյալ¹⁶²: Կարծում ենք, որ դրանք չէին կարող մեզ հասնել իրենց բնագրով, քանի որ գտնում ենք, որ հնարավոր է՝ դրանք փոխվել են տարբեր դարերի գրիչների, պատմագիրների կողմից:

Կարելի է մատնանշել, որ Մուհամմադի կողմից օտարերկրյա թագավորներին, իշխաններին ու կառավարիչներին ուղղված վերոհիշյալ ուղերձների տեքստերի բովանդակությունը հետագայում նրա կողմից օգտագործվել է Արաբական թերակղզու որոշակի շրջանների (Բահրեյն, Յամամա, Օման) բնակչությանը և կառավարիչներին տրված պայմանագրերի մեջ:

THE LETTERS SENT TO THE LEADERS OF NEIGHBORING CHRISTIAN AND NON-CHRISTIAN COUNTRIES BY PROPHET MUHAMMAD

Gayane Mkrtumyan
(summary)

After strengthening his power in the city of Medina (Madinah) Muhammad sent letters to the kings of Iran and Byzantium, to the Negus of Ethiopia, as well as to the leaders of Lahmia and Qosania. Muhammad called them to adopt Islam and pay the head-tax. In doing so, they would have the same rights and responsibilities which the Muslims had. This is evidenced by medieval Moslem historiography. Later the content of above mentioned letters was used in the contracts made with the Christian and Jewish populations inhabited the Arabian Peninsula.

¹⁵⁹ Վավ. 53ա, Nameha wa pimanhayе siyasi, p. 190-191.

¹⁶⁰ Dunlop A., Another "Prophetic" letter. IRAS. 1944, p. 54-60.

¹⁶¹ Большаков О., История халифата, т. 1, Москва, 1989, с. 154.

¹⁶² Там же, с. 172.